Հավելված
ՀՀ կառավարության 2017 թվականի
օգոստոսի 17-ի N 995 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂԻՆ ՊԱՀԵԼՈՒ ԵՎ ԿՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՇՎԵՑՈՒՑԱԿԱՅԻՆ ԶԵՆՔ ԵՎ ՌԱԶՄԱՄԹԵՐՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ, ՀԱՏԿԱՑՎԱԾ ԶԵՆՔԸ ՊԱՀԵԼՈՒ, ԿՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԵԼՈՒ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են քրեակատարողական ծառայողներին պահելու և կրելու իրավունքով հաշվեցուցակային զենք և ռազմամթերք (այսուհետ՝ զենք) հատկացնելու, հատկացված զենքը պահելու, կրելու և հանձնելու հետ կապված հարաբերությունները:

2. Քրեակատարողական ծառայողին (այսուհետ՝ ծառայող) պահելու և կրելու իրավունքով հատկացվում է Հայաստանի Հանրապետության քրեակատարողական ծառայության սպառազինության մեջ ընդգրկված հաշվեցուցակային ատրճանակ:

3. Ծառայողին հատկացվող զենքի հետ միասին տրվում են համապատասխան հարմարանքներ՝ զենքը բացահայտ կամ քողարկված կրելու համար, ինչպես նաև՝ զենքի խնամքի համար նախատեսված պարագաներ:

4. Քրեակատարողական ծառայության բարձրագույն պաշտոններ զբաղեցնող ծառայողներին պահելու և կրելու իրավունքով զենք հատկացվում է նրանց ծառայողական պարտականությունների կատարմանն անցնելու պահից: Քրեակատարողական ծառայության գլխավոր պաշտոններ զբաղեցնող ծառայողներին պահելու և կրելու իրավունքով զենք հատկացվում է հատուկ ուսուցում անցնելուց հետո: Քրեակատարողական ծառայության առաջատար, միջին և կրտսեր պաշտոններ զբաղեցնող ծառայողներին պահելու և կրելու իրավունքով զենք հատկացվում է հատուկ ուսուցում և ստուգում անցնելուց հետո:

5. Քրեակատարողական ծառայության բարձրագույն, գլխավոր, առաջատար, միջին և կրտսեր պաշտոններ զբաղեցնող ծառայողներին պահելու և կրելու իրավունքով զենք հատկացվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետի կողմից:

6. Պահելու և կրելու իրավունքով հատկացված զենքը ծառայողի կողմից գործադրվում (կիրառվում) և օգտագործվում է «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

II. ՊԱՀԵԼՈՒ ԵՎ ԿՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԶԵՆՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

7. Հատուկ ուսուցում անցած՝ քրեակատարողական ծառայության առաջատար, միջին և կրտսեր պաշտոններ զբաղեցնող ծառայողներին պահելու և կրելու իրավունքով զենք հատկացվում է զենքի նյութական մասի, մարտավարատեխնիկական բնութագրի, պահելու և կրելու անվտանգության, ինչպես նաև գործադրման (կիրառման) և օգտագործման իրավական հիմքերի վերաբերյալ ստուգումն անցնելուց հետո:

8. Քրեակատարողական ծառայության առաջատար, միջին և կրտսեր պաշտոններ զբաղեցնող ծառայողներին զենք հատկացնելու համար հիմք է ծառայողի զեկուցագիրը՝ համաձայն N 1 ձևի, ուղղված քրեակատարողական վարչության պետին՝ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում՝ ստորաբաժանման ղեկավարի, իսկ քրեակատարողական հիմնարկներում՝ քրեակատարողական հիմնարկի պետի միջնորդությամբ:

9. Ստուգումն անցած ծառայողի զեկուցագիրը և ստուգումների անցկացման համար քրեակատարողական վարչության պետի հրամանով ստեղծված հանձնաժողովի եզրակացությունը՝ համաձայն N 3 ձևի, ներկայացվում են տվյալ ստորաբաժանման սպառազինության համար պատասխանատու մարմնին (անձին)՝ զենքը տվյալ ծառայողին հատ-

կացնելու համար: Հանձնաժողովի եզրակացությունը գրանցվում է հաշվեցուցակային զենք հատկացնելու թույլտվությունների հաշվառման մատյանում՝ համաձայն N 2 ձևի:

10. Հաշվեցուցակային զենք հատկացնելու թույլտվությունների հաշվառման մատյանը վարում է հանձնաժողովի քարտուղարը:

III. ԶԵՆՔԸ ՊԱՀԵԼՈՒ, ԿՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

11. Պահելու և կրելու իրավունքով զենք ստացած ծառայողը պարտավոր է սարքին, անվտանգ և մաքուր պահել ստացած զենքը:

12. Զենքի կորուստը բացառելու նպատակով այն պետք է համապատասխան ամրակապով հուսալիորեն ամրացված լինի ծառայողի համազգեստին (հագուստին):

13. Արգելվում է ծառայողի կողմից զենք կրելն առանց համապատասխան հարմարանքների (ատրճանակի պատյան, ամրակապ և այլն):

14. Զենքը ծառայողի բնակության վայրում պետք է պահվի փականով ամրացված պահարանում կամ արկղում՝ միջոցներ ձեռնարկելով զենքին այլ անձանց հասանելիությունը բացառելու համար:

15. Քաղաքացիական հագուստ կրող ծառայողը զենքը կրում է քողարկված:

16. Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ծառայողը զենքով գործուղվում է միջազգային պայմանագրերով սահմանված դեպքերում և կարգով:

17. Հայաստանի Հանրապետության տարածքում գործուղման դեպքում՝ ժամանման վայրում զենքն անվտանգ պահելու հնարավորության բացակայության դեպքում գործուղված ծառայողը զենքն ի պահ է հանձնում քրեակատարողական հիմնարկի կամ մոտակա ոստիկանության բաժնի հերթապահ մաս:

18. Ծառայողին հատկացված զենքի, դրա տեխնիկական վիճակի, ինչպես նաև համապատասխան հարմարանքների նկատմամբ հսկողությունն իրականացվում է՝

1) ծառայողի անմիջական ղեկավարի կողմից՝ յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ՝ ծառայողի՝ ծառայության մեջ գտնվելու ժամանակ.

2) տվյալ ստորաբաժանման ղեկավարի կողմից՝ յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ.

3) սպառազինության համար պատասխանատու մարմնի (անձի) կողմից՝ տարեկան մեկ անգամ.

4) համապատասխան հրամանով՝ ենթակա ստորաբաժանումներ գործուղված քրեակատարողական ծառայության կենտրոնական ապարատի սպառազինության համար պատասխանատու մարմնի (անձի) կողմից.

5) շարային ստուգատես անցկացնելու ժամանակ՝ ստուգատես անցկացնող անձի կողմից:

19. Այլ ստորաբաժանում տեղափոխվելու, ծառայությունից ազատվելու (պահեստազոր տեղափոխվելու) դեպքերում ծառայողը պարտավոր է զենքը հանձնել ստորաբաժանման սպառազինության համար պատասխանատու մարմին (անձին) կամ հերթապահ մաս:

20. Ծառայողն ստացիոնար բուժման, ուսման կամ արձակուրդ մեկնելիս, ինչպես նաև զենքը պահելու համար հուսալի պայմանների չապահովման դեպքում զենքը ժամանակավորապես ի պահ է հանձնում քրեակատարողական հիմնարկի զինանոց:

21. Ծառայողը պարտավոր է զենքը հանձնել, եթե՝

1) ծառայողի կողմից խախտվել են սույն կարգով նախատեսված զենքը պահելու և կրելու պայմանները՝ ստորաբաժանման ղեկավարի կարգադրությամբ.

2) ժամանակավորապես դադարեցվել են ծառայողի ծառայողական լիազորությունները.

3) ծառայողն ազատվել է քրեակատարողական ծառայությունից.

4) ծառայողին արգելվել է զենք կրել՝ բժշկական եզրակացությամբ:

22. Ստորաբաժանման հերթապահ մաս հանձնած զենքի վերաբերյալ համապատասխան գրառում է կատարվում զենքի և հատուկ միջոցների հանձնման և ընդունման գրքում:

23. Զենքը գործադրելու կամ օգտագործելու, ինչպես նաև զենքը կորցնելու կամ փչացնելու դեպքերում ծառայողն անմիջապես զեկուցում է վերադասության կարգով և ձեռնարկում միջոցներ՝ զենքը վերանորոգելու, կորած զենքը որոնելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

Ձև N 1
Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարության
քրեակատարողական վարչության պետ

_____

_____

(կոչումը, անունը, ազգանունը)

Ջ Ե Կ Ո Ւ Յ Ց Ա Գ Ի Ր

Խնդրում եմ Ձեր թույլտվությունը՝ պահելու և կրելու իրավունքով հաշվեցուցակային զենք ստանալու նպատակով հաշվեցուցակային զենքի նյութական մասի, մարտավարատեխնիկական բնութագրի, պահելու և կրելու անվտանգության, ինչպես նաև գործադրման (կիրառման) և օգտագործման իրավական հիմքերի վերաբերյալ ստուգում անցնելու համար:

Հաշվեցուցակային զենքը պահելու անվտանգության պայմաններն աշխատավայրում և բնակության վայրում ապահովում եմ:

Տեղյակ եմ զենքի անօրինական գործադրման (կիրառման) կամ օգտագործման հետևանքների մասին:

_____
(պաշտոնը, կոչումը)

_____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)
_____ _____ 20 թ.

«Միջնորդում եմ
հատկացնել հաշվեցուցակային զենք»

_____
(քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում՝ ստորաբաժանման, իսկ քրեակատարողական հիմնարկում՝ քրեակատարողական հիմնարկի պետի պաշտոնը, կոչումը)

_____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)
____ _____ 20 թ.

Ձև N 2

Հ Ա Շ Վ Ա Ռ Մ Ա Ն Մ Ա Տ Յ Ա Ն

ՀԱՇՎԵՑՈՒՑԱԿԱՅԻՆ ԶԵՆՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

NN ը/կ	Եզրակացությունը տալու ամսաթիվը	Կոչումը, ազգանունը, անունը	Ծառայությունը, պաշտոնը
1	2	3	4

Ձև N 3

«Թույլատրում եմ
հատկացնել հաշվեցուցակային զենք»

Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարության
քրեակատարողական վարչության պետ
_____
(կոչումը, անունը, ազգանունը)
_____
(ստորագրությունը)
____ _____ 20 թ.

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն N _____

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության
_____
(ստորաբաժանման, ծառայության անվանումը)
_____
(պաշտոնը, կոչումը, անունը, ազգանունը)

հաշվեցուցակային զենք հատկացնելու վերաբերյալ

Հաշվեցուցակային զենքի նյութական մասի, մարտավարատեխնիկական բնութագրի, պահելու և կրելու անվտանգության, ինչպես նաև գործադրման (կիրառման) և օգտագործման իրավական հիմքերի վերաբերյալ ստուգումն անցել է:

Հանձնաժողովը որոշեց _____-ին հատկացնել
(անունը, ազգանունը)
_____:
(նշվում է՝ պահելու և կրելու իրավունքով)

Հանձնաժողովի նախագահ _____
(պաշտոնը, հատուկ կոչումը)
_____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

17_995

Հանձնաժողովի նախագահի տեղակալ _____

(պաշտոնը, հատուկ կոչումը)

_____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Հանձնաժողովի անդամներ _____

(պաշտոնը, հատուկ կոչումը)

_____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Հանձնաժողովի քարտուղար _____

(պաշտոնը, հատուկ կոչումը)

_____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)